



«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մուրավական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Քննական թեստի նմուշ


Քիմիա,
9-րդ դասարանի համար
Ընդհանուր միավորների թիվը -33 միավոր

Անուն, ազգանուն _____





Սմիս, ամսաթիվ _____

1. Ի՞նչ նյութաքանակի (մոլ) է համապատասխանում 5,6լ (ն.ս.) գազային ծծմբաջրածինը (H_2S):
Քանի՞ մոլ էկուլ է պարունակում: Քանի՞ ջրածնի ատոմ է պարունակում: [3]

2. Ի՞նչ զանգվածով ջուր պետք է քայքայել 5,6 լիտր (ն.ս.) թթվածին ստանալու համար. [3]




3.. Վերականգնել ռեակցիաների հավասարումները՝ լրացնելով բաց թողած նյութերի քանակները և գործակիցները. [4]



4. Որքա՞ն է մեթան (CH_4) գազի հարաբերական խտությունն ըստ ջրածնի : [1]

5. Խառնել են 10 գրամ նատրիումի հիդրօքսիդ՝ NaOH և 4,9 գրամ ծծմբական թթու՝ H₂SO₄ պարունակող լուծույթներ: Չեզոքացման ժամանակ քանի՞ գրամ նատրիումի սուլֆատ՝ Na₂SO₄ կստացվի ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման. [4]



6. Առանձին սյունակներով գրել օքսիդները, հիմքերը, թթուները, աղերը: [6]

ա.

NaCl, CaO, HCl, SO₂, Al(OH)₃, Al(NO₃)₃, Li₃PO₄, H₂CO₃

բ.

ծծմբի(VI) օքսիդ, կալիումի հիդրօքսիդ, ծծմբական թթու, երկաթի(III)հիդրօքսիդ

Օքսիդներ	Հիմքեր	Թթուներ	Աղեր

7. Գրել յուրաքանչյուր փոխարկմանը համապատասխան ռեակցիայի հավասարումը: [5]

Ա. CaO----Ca(OH)₂ ----CaCl₂

Բ. P ----- P_2O_5 ----- H_3PO_4 ----- Na_3PO_4

8. Հետևյալ մետաղներից որո՞նք կփոխազդեն աղաթթվի հետ. այնուհին, մագնեզիում և պղինձ: Բացատրել և գրել համապատասխան ռեակցիաների հավասարումները: [2]

9. Որքան կերակրի աղ և ջուր պետք է վերցնել 800գ 25% զանգվածային բաժնով կերակրի աղի ջրային լուծույթ ստանալու համար: [2]

10. Գրել ջրի անոմալ հատկությանը պատճառը: [3]

Ա. Ինչու՞ է սառույցն առաջանում ջրի մակերեսին:

Բ. Ինչու՞ են ձմռանը ավտոմեքենաների ռադիատորների մեջ անտիֆրիզ լցնում:

Գ. Ինչու՞ անձրևից հետո օդը մաքուր է:

Լրացուցիչ

11*. Նատրիումի ֆոսֆատի 180 մլ 22% -անոց լուծույթի (խտ. 1,3գ/մլ) վրա ավելացրել են 340մլ 3 մոլ/լ մոլային կոնցենտրացիայով արծաթի նիտրատի լուծույթ (խտ. 0,92գ/մլ) Որոշել նստվածքի (Ag_3PO_4) զանգվածը: Որոշել ավելցուկով նյութի ավելացած մասի զանգվածային բաժինը: [8]

